**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
անշարժ գույքի շուկան 2010թ. I կիսամյակում**

*Հոդվածը ներկայացնում է ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացված, անշարժ գույքի շուկայի մոնիտորինգի /համակարգված դիտարկումներ/ աշխատանքների արդյունքները և նպատակ ունի քաղաքացիներին իրազեկ դարձնելու ԼՂՀ անշարժ գույքի շուկայի իրավիճակին: Հոդվածում ներկայացվող Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում անշարժ գույքի շուկայական գները ձևավորվել են կոմիտեի ստորաբաժանումների կողմից գրանցված առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից կատարված հարցումների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող անշարժ գույքի գների վերլուծության արդյունքում:*

2010թ. I կիսամյակում կոմիտեի ստորաբաժանումների կողմից իրականացվել է 3545 իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը 2009թ. II կիսամյակի համեմատ նվազել է 20,1%-ով, իսկ 2009թ. I կիսամյակի համեմատ աճել է 16,7%-ով:

Ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, իրականացված գրանցումների ծավալները ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009,2010թթ. I կիսամյակներում և 2009թ. II կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունները՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I կիսամյակ 2009թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2010թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2009թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *971* | *59,6%* | *1550* | *-18,0%* | *1891* |
| Ասկերան | *494* | *9,5%* | *541* | *-14,3%* | *631* |
| Մարտունի | *472* | *-7,4%* | *437* | *-25,2%* | *584* |
| Մարտակերտ | *335* | *-12,8%* | *292* | *-38,8%* | *477* |
| Հադրութ | *121* | *63,6%* | *198* | *-11,2%* | *223* |
| Շուշի | *292* | *1,4%* | *296* | *-1,7%* | *301* |
| Քաշաթաղ | *352* | *-34,4%* | *231* | *-30,2%* | *331* |
| ***Հանրապետություն*** | ***3037*** | ***16,7%*** | ***3545*** | ***-20,1%*** | ***4438*** |

Նույն ժամանակահատվածում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների գրանցումները, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009,2010թթ. I կիսամյակներում և 2009թ. II կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունները՝ ըստ գործարքների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| *Գործարքների տեսակները* | *I կիսամյակ 2009թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2010թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2009թ.* |
|---|---|---|---|---|---|
| *Առուվաճառք* | *492* | *20,3%* | *592* | *-17,9%* | *721* |
| *Նվիրատվություն* | *191* | *9,9%* | *210* | *-4,5%* | *220* |
| *Վարձակալում* | *764* | *-42,5%* | *439* | *-38,9%* | *718* |
| *Գրավադրում* | *260* | *2,8 անգամ* | *721* | *-20,7%* | *909* |
| *Ժառանգություն* | *148* | *33,1%* | *197* | *-23,0%* | *256* |
| *Օգտագործում* | *41* | *4,9 անգամ* | *202* | *5,2 անգամ* | *39* |
| *Սեփականաշնորհում* | *78* | *24,4%* | *97* | *-50,8%* | *197* |
| *Մասնավորեցում* | *43* | *23,3%* | *53* | *82,8%* | *29* |
| *Առաջնային գրանցում* | *1020* | *1,4%* | *1034* | *-23,4%* | *1349* |
| ***Ընդամենը*** | ***3037*** | ***16,7%*** | ***3545*** | ***-20,1%*** | ***4438*** |

2010թ. I կիսամյակում հանրապետությունում ընդհանուր առմամբ իրականացվել է 592 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ կիսամյակի համեմատ նվազել է 17,9%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 20,3%-ով, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել է 136, իսկ բնակելի տների նկատմամաբ՝ 87 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում:

2009,2010թթ. I կիսամյակներում և 2009թ. II կիսամյակում Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխությունները, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I կիսամյակ 2009թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2010թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2009թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *134* | *26,9%* | *170* | *-45,9%* | *314* |
| Ասկերան | *118* | *22,0%* | *144* | *-7,7%* | *156* |
| Մարտունի | *98* | *-22,4%* | *76* | *-27,6%* | *105* |
| Մարտակերտ | *57* | *24,6%* | *71* | *29,1%* | *55* |
| Հադրութ | *13* | *84,6%* | *24* | *-31,4%* | *35* |
| Շուշի | *54* | *40,7%* | *76* | *2,0 անգամ* | *38* |
| Քաշաթաղ | *18* | *72,2%* | *31* | *72,2%* | *18* |
| ***Հանրապետություն*** | ***492*** | ***20,3%*** | ***592*** | ***-17,9%*** | ***721*** |

2009,2010թթ. I կիսամյակներում և 2009թ. II կիսամյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների

քանակները և նրանց փոփոխությունները՝ ըստ անշարժ գույքի առանձին տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| N | Անշարժ գույքի տեսակները | Առուվաճառքի գործարքների քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | I կիսամյակ 2009թ. | փոփոխումը | I կիսամյակ 2010թ. | փոփոխումը | II կիսամյակ 2009թ. |
| 1 | բազմաբնակարան շենքի բնակարաններ | 62 | 2,2 անգամ | 136 | -30,6% | 196 |
| 2 | առանձնատուն | 80 | 8,8% | 87 | -12,1% | 99 |
| 3 | այգետնակ | 0 | 1-ով ավել | 1 | 1-ով ավել | 0 |
| 4 | արտադրական նշ. օբյեկտ | 13 | 23,1% | 16 | 0,0% | 16 |
| 5 | հասարակական նշ. օբյեկտ | 41 | 7,3% | 44 | 2,0 անգամ | 22 |
| 6 | ավտոտնակ | 12 | -33,3% | 8 | -57,9% | 19 |
| 7 | հողամաս | 284 | 5,6% | 300 | -18,7% | 369 |
| | **Ընդամենը** | **492** | **20,3%** | **592** | **-17,9%** | **721** |

2009թ. II կիսամյակում և 2010թ. I կիսամյակում հանրապետության մի շարք քաղաքային համայնքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների և բնակելի տների առուվաճառքների գործարքների պայմանագրային գների և կոմիտեի կողմից իրականացված անշարժ գույքի շուկայի դիտարկումների արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական նվազագույն, առավելագույն և միջին գները ու նրանց փոփոխումները :

***Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների***

| Քաղաքներ | 2009թ. II կիսամյակ | | | 2010թ. I կիսամյակ | | | փոփոխումը 2009թ. II կիսամյակի նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 քմ արժեքը /$/ | | | 1 քմ արժեքը /$/ | | | |
| | նվազագույն | առավելագույն | միջին | նվազագույն | առավելագույն | միջին | |
| Ստեփանակերտ | 176 250 | 281 250 | ***228 750*** | 198 000 | 285000 | **241 500** | ***5,6%*** |
| Ասկերան | 37 500 | 52 500 | ***45 000*** | 42 480 | 53500 | **47 990** | ***6,6%*** |
| Մարտունի | 33 750 | 52 500 | ***43 125*** | 38 520 | 51600 | **45 060** | ***4,5%*** |
| Մարտակերտ | 15 000 | 28 125 | ***21 562*** | 16 200 | 28000 | **22 100** | ***2,5%*** |
| Հադրութ | 18 750 | 32 625 | ***25 687*** | 19 800 | 31800 | **25 800** | ***0,4%*** |
| Շուշի | 31 875 | 86 250 | ***59 062*** | 36 000 | 85800 | **60 900** | ***3,1%*** |

*Բնակելի տներ*

| *Քաղաքներ* | *2009թ. II կիսամյակ* | | | *2010թ. I կիսամյակ* | | | *փոփոխումը 2009թ. II կիսամյակի նկատմամբ* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /$/* | | | *միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /$/* | | | |
| | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | |
| Ստեփանակերտ | 20 625 000 | 36 375 000 | ***28 500 000*** | 23 040 000 | 37 000 000 | ***30 020 000*** | ***5,3%*** |
| Ասկերան | 3 562 500 | 5 062 500 | ***4 312 500*** | 3 852 000 | 4 900 000 | ***4 376 000*** | ***1,5%*** |
| Մարտունի | 3 112 500 | 4 312 500 | ***3 712 500*** | 3 402 000 | 4 200 000 | ***3 801 000*** | ***2,4%*** |
| Մարտակերտ | 1 537 500 | 3 000 000 | ***2 268 750*** | 1 656 000 | 3 000 000 | ***2 328 000*** | ***2,6%*** |
| Հադրութ | 1 575 000 | 2 925 000 | ***2 250 000*** | 1 656 000 | 2 900 000 | ***2 278 000*** | ***1,2%*** |
| Շուշի | 2 437 500 | 5 437 500 | ***3 937 500*** | 2 664 000 | 5 550 000 | ***4 107 000*** | ***4,3%*** |

2010թ-ի I կիսամյակում հանրապետությունում իրականացվել է 439 վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ կիսամյակի համեմատ նվազել է 38,9%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 42,5%-ով:

Վարձակալության գործարքների քանակների փոփոխությունները՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2009,2010թթ. I կիսամյակներում և 2009թ. II կիսամյակում, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I կիսամյակ 2009թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2010թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2009թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *94* | *13,8%* | *107* | *10,3%* | *97* |
| Ասկերան | *144* | *-34,7%* | *94* | *32,4%* | *71* |
| Մարտունի | *154* | *-58,4%* | *64* | *-39,0%* | *105* |
| Մարտակերտ | *152* | *-69,1%* | *47* | *-68,9%* | *151* |
| Հադրութ | *25* | *2,0 անգամ* | *50* | *13,6%* | *44* |
| Շուշի | *14* | *-50,0%* | *7* | *-50,0%* | *14* |
| Քաշաթաղ | *181* | *-61,3%* | *70* | *-70,3%* | *236* |
| ***Հանրապետություն*** | ***764*** | ***-42,5%*** | ***439*** | ***-38,9%*** | ***718*** |

2010թ. I կիսամյակում հանրապետությունում գրանցվել է 2973,03 հա ընդհանուր մակերեսով, գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության 273 գործարքներ, որոնց քանակը և մակերեսները՝ ըստ հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *2010թ. I կիսամյակում վարձակալված հողամասերի* | |
|---|---|---|
| | *քանակը* | *մակերեսը /հա/* |
| *Ասկերան* | *71* | *455,4* |
| *Մարտունի* | *38* | *137,48* |
| *Մարտակերտ* | *42* | *740,5* |
| *Հադրութ* | *49* | *632,22* |
| *Շուշի* | *4* | *107,2* |
| *Շահումյան* | *1* | *15,0* |
| *Քաշաթաղ* | *68* | *885,23* |
| ***Հանրապետություն*** | ***273*** | ***2973,03*** |

Հանրապետությունում անշարժ գույքի շուկայի դիտարկումները ցույց են տալիս, որ վարձակալության համար, որպես ակտիվ անշարժ գույքի տեսակներ, հանդես են գալիս, Ստեփանակերտում՝ հասարակական նշանակության օբյեկտները, իսկ շրջաններում՝ գյուղատնտեսական նշանակության հողամասերը:

2009թ-ի II կիսամյակում հանրապետությունում իրականացվել է 721 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ կիսամյակի համեմատ նվազել է 20,7%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 2,8 անգամ:

2009,2010թթ. I կիսամյակներում և 2010թ. II կիսամյակում գրավադրման գործարքների քանակների փոփոխությունները՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I կիսամյակ 2009թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2010թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2009թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *181* | *2,3 անգամ* | *407* | *-11,5%* | *460* |
| Ասկերան | *26* | *3,0 անգամ* | *77* | *-38,9%* | *126* |
| Մարտունի | *22* | *4,9 անգամ* | *109* | *-24,8%* | *145* |
| Մարտակերտ | *13* | *3,2 անգամ* | *42* | *-52,3%* | *88* |
| Հադրութ | *4* | *8,5 անգամ* | *34* | *-22,7%* | *44* |
| Շուշի | *14* | *2,9 անգամ* | *41* | *-2,4%* | *42* |
| Քաշաթաղ | *0* | *11-ով ավել* | *11* | *2,8 անգամ* | *4* |
| ***Հանրապետություն*** | ***260*** | ***2,8 անգամ*** | ***721*** | ***-20,7%*** | ***909*** |

2010թ. I կիսամյակում հանրապետությունում իրականացվել է 150 սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների

պետական գրանցում, որոնց քանակը նախորդ կիսամյակի համեմատ նվազել է 33,6%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 24,0%-ով:

Սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքների քանակների փոփոխությունները` ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2009,2010թթ. I կիսամյակներում և 2009թ. II կիսամյակում, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I կիսամյակ 2009թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2010թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2009թ.* |
|---|---|---|---|---|---|
| *Ստեփանակերտ* | *54* | 2,0 անգամ | *110* | -36,8% | *174* |
| *Ասկերան* | *3* | 0,0% | *3* | 50,0% | *2* |
| *Մարտունի* | *9* | -66,7% | *3* | -50,0% | *6* |
| *Մարտակերտ* | *15* | -40,0% | *9* | 28,6% | *7* |
| *Հադրութ* | *4* | 0,0% | *4* | -42,9% | *7* |
| *Շուշի* | *30* | -30,0% | *21* | 61,5% | *13* |
| *Քաշաթաղ* | *6* | 6-ով պակաս | *0* | 17-ով պակաս | *17* |
| ***Հանրապետություն*** | ***121*** | ***24,0%*** | ***150*** | ***-33,6%*** | ***226*** |

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«Գնահատման և համակարգված դիտարկումների բաժին»

ՀԵՌ : 95-17- 49